

պատուիրակ (1840 Ապր. 25). նորընտիր Զաքարիա պարքի հրովարտակը կը բերէ Երուսաղէմ 1841ին. Նւ. Հնդկաց 1842ին. կ'աշխատի հնդկահայ վիճակը կցել Երուսաղէմի պատրիարքութեան ինչպէս կը վկայուի հետեւեալ տողերով. «Անցեալ խաղացեալ մեր անտի ի Կալկաթա, գտանեմք զԻսահակ Ծ. վարդապետ նուիրակն Երուսաղէմի բազմեալ յաթոռ մեծի իշխանութեան, ի կողմն իւր համոզեալ զհասարակութիւնն, բարձեալ զանուն թեմակալ առաջնորդի՝ յերգս գոնութեան օրբոյ պատարագի, և ի մէջ բերեալ զանուն Զաքարիա պատրիարքին Երուսաղիմայ. ջանս ի վերայ թափէ անգրափոխել զՀնդկաստան ի տէրութեան եւ իշխանութեան տեղւոյն, եւ ժողովուրդն հաճոյ այսմ». (Մայիկեան, էջ 46—47):

Սահակ վրդ. Հնդկաստանէն մեկնած պահուն, տեղւոյն ժողովուրդէն կ'ստանայ (17 Մայիս, 1844) արուեսագործ գեղեցիկ ոսկեգօծ գաւազան մը եւ մագաղաքեայ ուղեքն մը. ձիտտէ հաղնելուն՝ կը հլւանդանայ և կը վախճանի հոն 1847ին: 1854 Օգոստ. 30 ին իր ոսկերոտին կը փոխազրուի Երուսաղէմ և կը թաղուի Սիոնի գերեզմանատունը. հետեւեալն է իր տապանագիրը.

«Սօտ

Հանգչին ոսկերք

Տ. Իսահակ Ծ. վրդ.ին

Բազմարդիւն նուիրակի

Հնդկաց

Որ

Դարձին ի ձիտտէ վախճանի Տ Մայիս 1843 և ի ձեռն աշակերտի իւրոյ Տ. Իսահակայ վրդ.ի փոխադրին աստէն նըշխարք ոսկերաց 1854 յիշատակ արգարոցն օրհնութեամբ եղիցի:» Սահակ վրդ. իր թարգմանութեան օրով գրի առած է (թէ և թերի) Ս. Յարութեան տաճարին մէջ Եզրիպտոսի Իպրահիմ փաշայի ներկայութեան պատահած ցաւալի զէպքը՝ որ է հետեւեալը. «Լուսաւորեային օրը, ուխտաւորներու բազմութեան պատճառաւ 250 անձեր (81ը հայ) տաճարին մէջ շնչահեղձ կ'ըլլան եւ մեծ իրարանցում տեղի կ'ունենայ ու մեծ զժուարութեամբ այս զէպքին առջեւ կ'առնուի»: Սահակ վրդ. այս պատմութեան կցած է նաև Իպրահիմ փաշայի մօտ իր կատա-